

Հայ գրականության մարզային օլիմպիադա

Հարցաշարերի պատասխաններ

10-րդ դասարան

1. Հայ հին գրականությունը սկզբնավորվել է անմիջապես գրերի գյուտից հետո՝ 5-դարում: 5-րդ դարի հայ մատենագրությունը կոչվում է Ոսկեդար, քանի որ Մաշտոցի «սուրբ հանճարով» ստեղծվեց Հայոց գիրը, որով հետագայում մատենագրեցին Մաշտոցի տաղանդավոր աշակերտները:

Հին ոսկեդենիկ հայերենով թարգմանվում է Սուրբ գիրքը՝ Աստվածաշունչը: Այդ թարգմանությունը համարվում է «թարգմանությունների թագուհի»: Սկիզբ է դրվում թարգմանական գրականությանը: Թարգմանությունների շնորհիվ սկիզբ է առնում և զարգանում հայ ինքնուրույն գրականությունը, և սկսվում է հայ գրականության Ոսկեդարը: Ոսկեդարի մատենագրության ամենահարուստ բաժինը պատմագրությունն է:

Հայտնի են Ոսկեդարի հինգ խոշոր պատմիչներ. Ագաթանգեղոս, Բուզանդ, Եղիշե, Փարպեցի, Խորենացի:

Առաջին «Հայոց պատմությունը» Ագաթանգեղոսի մատյանն է, որը հիմնականում ընդգրկում է Հայաստանում քրիստոնեության տարածման շրջանը: Ագաթանգեղոս անունը հունարենից թարգմանվում է բարի հրեշտակ կամ ավետաբեր:

Իր մասին տեղեկություններ թողել է ինքը իր «Պատմության» առաջաբանում.

«Արդ, հրաման է հասել ինձ՝ Ագաթանգեղոսիս, որ մեծ Հռոմ քաղաքից եմ, կրթված հայրենի գիտությամբ, սովորել եմ լատիներեն և հունարեն, ուսանել դպրությունը և ոչ խիստ անտեղյակ նշանագրերի արվեստին: Սրա հետ մեկտեղ եկել եմ Արշակունու արքունիք, քաջ և առաքինի, ուժեղ և պատերազմող Տրդատի տարիներին: Արդ, ինձ հրաման է հասել Տրդատ Մեծ արքայից՝ կարգով գրի առնել ժամանակների դեպքերը»:

Իր շարադրանքի վերջում նույնպես նա անդրադառնում է Տրդատ Մեծի հրամանին և հավաստում, որ «ոչ թե հին գրույցներից տեղեկանալով և մատենագրելով կարգեցինք, այլ մենք ինքներս ականատես եղանք նրանց կերպարանքներին և առկա հոգևոր գործերին: Ոչ թե ստապատում ճարտարախոս լինելով գրեցինք մեր խոսքերով, այլ հաճախագույնը թողնելով և նշանավոր գիտակներից քաղելով՝ այս համառոտը կարգեցինք»:

Այսպես մատենագիրը փաստում է, որ ինքը եղել է Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի ժամանակակիցն ու զինակիցը:

Ագաթանգեղոսի մասին գրել և ակնարկել են նրա ժամանակակիցները և հետնորդները՝ Բուզանդը, Խորենացին, Փարպեցին, Սեբեոսը: Ագաթանգեղոսի «Պատմությունը» բաղկացած է «Առաջաբան»-ից և չորս գլուխներից՝ «Սուրբ Գրիգորի վարքը և պատմությունը», «Հռիփսիմյանների վկայաբանությունը», «Սուրբ Գրիգորի վարդապետությունը», «Հայաստան աշխարհիս փրկության դարձը»:

Քրիստոնության մուտքն ու տարածումը Ագաթանգեղոսը ներկայացնում է լեգենդներով պարուրված գրույցներով: Մանրամասն ներկայացնում է Խոսրով արքային և պարթև նահապետ Անակին, Գրիգոր Լուսավորչին, Տրդատ Մեծին, Աշխեն թագուհուն, արքայադուստր Խոսրովիդուխտին, Յոնիսիմեին ու Գայանեին և մյուս կույսերին:

Խոսրով թագավորը անընդհատ պատերազմում է պարթև Արշակունիների դեմ, և նրան հակահարված տալու պարտականությունը ստանձնում է Անակը: Նա խորամանկությամբ վաստակում է Խոսրովի վստահությունը, այնուհետ դավադրաբար սպանում: Հայոց զորքը հետապնդում է Անակին և գետավեժ անում ամբողջ տոհմը, փրկվում են միայն Անակի 2-որդիները, որոնցից մեկին փախցնում են Պարսից կողմերը, իսկ մյուսին՝ Հունաց: Պարսից արքան էլ կոտորում է Խոսրովի արքայական տոհմը. փրկվում է միայն մանուկ Տրդատը:

Ահա այս երկու մանուկն են հետագայում դառնում արքա և կաթողիկոս: Գրիգորը, որ Կեսարիայում դաստիարակվել էր Քրիստոսի երկյուղով և ընտելացել Աստվածաշնչին, Տրդատի թագավոր դառնալուց հետո դայակներից տեղեկանում է հոր կատարած ոճիրի մասին և ինքնակամ գնում Տրդատին ծառայելու:

Եկեղյաց գավառի Երիզա ամրոցում Տրդատը Գրիգորին հրամայում է «պսակներ և ծառերի թավ ճյուղեր նվիրաբերել Անահիտի արձանի բագինին», սակայն Գրիգորը հրաժարվում է՝ պատճառաբանելով իր քրիստոնյա լինելը. Նա ասում է «Աստծո Որդին լույսի լույսն է և կյանքի կյանքը», որ պետք է փոխարինի կուռքերին: Նրան անասելի տանջում են և նետում Խոր վիրապի արքայական բանտը: Շուրջ 13 տարի նա մնում է բանտում, բայց Աստծո զորությամբ կենդանի է մնում:

Այնուհետև պատմում է սքանչատեսիլ Յոնիսիմեի մասին, որ իրենց գլխավոր Գայանեի հետ փախել եկել էր Հայաստան:

Հույն Դիոկղետիանոս թագավորը, որ սիրահարվել էր Յոնիսիմեին, և որից փախել էր առաքինի կույսը, հրովարտակով դիմում է Տրդատին՝ պատժել կույսերին, իսկ Յոնիսիմեին ուղարկել իրեն, իսկ եթե Տրդատը ուզենա, տիրանա նրան: Սակայն Յոնիսիմեին մերժում է արքային, նահատակվում հանուն Քրիստոսի:

Տրդատի վրա իջնում է «տիրոջ պատուհասը». որսի ժամանակ «պիղծ դևը խփելով թագավորին կառքից վայր տապալեց», և նա ստանում է խոզի կերպարանք և դառնում խոտաճարակ: Արքայի քույր Խոսրովիդուխտին Աստծու տեսիլ է երևում, ըստ որի՝ արքային և քաղաքին պատուհասած հարվածներից կարող է փրկել կապյալ Գրիգորը: Օտա անունով մի նախարար գնում և բերում է Գրիգորին, և վերջինս աղոթքի ուժով մարդկային կերպի է բերում պատուհասյալներին:

Այնուհետև սկսվում է սուրբ Գրիգորի վարդապետությունը և Հայաստան աշխարհի դարձի գալը: Եվ 301-ին Տրդատ արքան քրիստոնեությունը հայտարարում է ոչ միայն ազատ, այլև պետական կրոն: Սկսվում է Հայաստանում հեթանոսական տաճարների կործանման և նոր հավատի օջախներ ստեղծելու փուլը:

Կառուցվում են առաջին եկեղեցիները Տիր, Վահագն, Անահիտ աստվածների

մեհյանների տեղում: Գրիգորը դառնում է հայոց հավատի ջահակիրը և առաջին կաթողիկոսը:

Կյանքի վերջում նա ճգնում էր Դարանաղից գավառի Մանյա Այրք կոչված լեռան վրա, անբնակ տեղում: Նա վախճանվում է 325-թ-ին, մի հովիվ նրա աճյունը ամփոփում է Թորդան գյուղում: Այնուհետև և՛ Գրիգորը , և՛ Տրդատը սրբացվում են հայոց եկեղեցու կողմից:

2.Վերոնշյալ պատվանունները բնութագրում են հայ պատմագրության հայր Մովսես Խորենացին, ում մասին մեծ պատմավիպասան Րաֆֆին ասել է «Խորենացին ազատեց Հայաստանը պատմության մահից»: Րաֆֆու բնութագրումը խիստ տեղին և ճշմարիտ է , քանի որ Պատմահոր «Հայոց պատմությունը» իսկապես հայ ժողովրդի «Գիրք ճանապարհի » -ն է, ստեղծվել է Աստվածաշնչի նմանությամբ և կառուցվածքով և նույն դերն էլ ունի մեր ժողովրդի ազգային գիտակցության մեջ:

Խորենացին հայերենի առաջին ուսուցչի հանճարեղ աշակերտն է և որդիական սիրով ու պատասխանատվությամբ է խոսում իր հոգևոր հայրերի՝ Մաշտոցի և Պարթևի մասին , որոնք նրան մի խմբի հետ ուղարկել էին արտասահման՝ ուսում ստանալու: Խորենացու և իր ընկերների վերադարձից հետո Հայաստանում սկիզբ է առնում մշակութային զարթոնք, որի բարձրակետը Քերթովահայրն է:

Նա թողել է գրական հարուստ ժառանգություն: 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին թվարկում է Խորենացու հետևյալ աշխատությունները.

«Սքանչելի Մովսեսը Սահակ Բագրատունու խնդրանքով գրեց « Հայոց Պատմությունը » և Արծրունի իշխանների խնդրանքով՝ «Պիգոյից»-ը և «Սուրբ Հռիփսիմյանների ներբողյանը», «Վարդավառի ներբողյանը»: Այսպիսով՝ Խորենացուց մեզ են հասել հռչակավոր «Հայոց պատմությունը» , «Թուղթ առ Սահակ Բագրատունի», «Պատմություն Հռիփսիմյանց», «Հաղագս Վարդավառի», «Հաղագս Պիտոյից»: Խորենացին եղել է անկրկնելի թարգմանիչ, նրան է վերագրվում «Ալեքսանդրի պատմություն» թարգմանությունը: «Հայոց պատմությունը» նա գրել է մարզպան Սահակ Բագրատունու պատվերով, որ նրա առաջ երկու պայման է դրել՝

ա) համառոտաբանություն, բ) ստուգաբանություն:

Այս է պատճառը, որ Պատմահայրը հաճախ է հիշատակում, որ դեպքերը ինքը պետք է նկարագրի համառոտ, կարճառոտ, սեղմ:

Պատմությունն ստեղծվել է շատ սեղմ ժամկետում (481-484), մարզպանի զոհվելուց հետո նա կորցնում է հովանավորին և դառնում չարամիտ հարձակումների թիրախ:

Իր աշխատությունը Խորենացին ավարտում է նշանավոր «Ողբ»-ով, որը առավել քան արդարացի ու այժմեական է այսօր: Խորենացուն ծանոթ էին բազում ողբեր «Աստվածաշնչից» և ահա նրա առջև պետականությունը կորցրած Հայոց աշխարհն է, դավաճանած իշխանները, կաշառակեր ու անիրավ դատավորները, գինեմուլ, ելուզակ, անարի զինվորականները, տգետ ուսուցիչները:

«... Եվ առհասարակ սերն ու ամոթը ամենից վերացած»:

Այսօր էլ մեր երկիրը կանգնած է ծանր փորձությունների առջև, մեր անվեհեր ժողովուրդը պարտված է, մեր հպարտ զինվորը գլխահակ է, իսկ մեր կառավարիչները՝ օտարամոլ ու անհայրենիք:

Բայց ես հավատում եմ քեզ, Հայո՛ց հող, հավատում եմ արտերիդ ծփանքին, երդիկիդ ծխին, մտքիդ տիեզերական թռիչքին: Եվ երդվում եմ Պատմահորը , որ «Ողբը» կմնա որպես ծանր հիշողություն:

3.Նարեկա վանքը գտնվում է Վանա ծովի հարավային ափի մոտ՝ «լեռնահողով ու կարծրախարխիս»(Նարեկացու բառերը): Ռշտունյաց աշխարհի համանուն գյուղում է վանքը , որը շինված է սպիտակ սրբատաշ քարերով՝ մի բլրակի գագաթին: Գյուղից փոքր-ինչ հյուսիս՝ անմիջապես ծովափին, Նարեկացու աղոթատեղին է՝ մի բարձր քարաժայռ:

Նարեկավանքի դպրոցը հիմնվել է X դարում, Նարեկավանքում , Անանիա Նարեկացու ջանքերով: Ստեփանոս Աստղիկի վկայությամբ հռչակված է իբրև «... բազմազարդ պաշտոնապայծառ երգեցողօք և գրական դիտողօք...»: Աշակերտներից հայտնի են Խոսրով Անձևացու որդիները՝ Սահակը, Հովհաննեսը, Գրիգորը(Անանիա Նարեկացու եղբոր թոռները): Անանիա Նարեկացին՝ Նարեկավանքի հիմնադիրն ու առաջնորդը, «մեծ փիլիսոփա», «երևելի վարդապետ», իր հանճարեղ աշակերտի դիպուկ բնութագրմամբ «հոգեզարդ և մտավարժ փիլիսոփա», մեծ տեղ է հատկացրել գրականությանն ու երգեցողությանը: Նա բազմաթիվ մեկնողական ու խրատաբանական գործերի հեղինակ է: Խոսրով Անձևացին՝ Նարեկացու հայրը, հայ եկեղեցական գործիչ է, մատենագիր: Կնոջ մահից հետո ստացել է հոգևորական աստիճան: Անանիա Մոկացի կաթողիկոսից 940-ին ձեռնադրվել է Վասպուրականի Անձևացիք գավառի եպիսկոպոս: Կաթողիկոսը նրան կոչում է «այր համեստ ու գիտնավոր»: Նա ժամանակի առաջադեմ ու կրթյալ հոգևորականներից էր, հմուտ աստվածաբան, աստվածաբանական գրքերի ու «ժամագրքի» հեղինակ: Նրա որդիները ընդօրինակել են իրենց հոր «Պատարագի մեկնությունը»: Անանիա Նարեկացուն ու Խոսրով Անձևացուն մեղադրել են ու հալածել որպես աղանդավորականների, հավանաբար թոնդրակեցիների աղանդին հարելու համար: Անանիա Նարեկացին գրել է իր անմեղությունն ապացուցող գործեր, մինչդեռ Խոսրով Անձևացուն բանադրել և կարգալույծ է արվել Անանիա Մոկացու կողմից՝ մեղադրվելով խաչի օրհնությունը ավելորդ համարելու, հրեշտակներին պաշտելու ու կաթողիկոսին և եպիսկոպոսներին մեծարելու համար:

Գրիգոր Նարեկացին՝ «մեծ հսկան»(Միսաք Մեծարենց), «Մեր հին մեծ բանաստեղծը»((Մանուկ Աբեղյան), բնության հայտնաբերողն է հայ քնարերգության մեջ. նա բնությունը դիտում է հարափոփոխ շարժման ու արարումի մեջ: «Տաղ Վարդավառի» տաղը արտահայտում է բանաստեղծի հրճվանքը արթնացող ու փթթող բնության հազարերանգ գեղեցկության հանդեպ: Հեթանոսական ժամանակների Վարդավառը վերաիմաստավորվել է Քրիստոսի Պայծառակերպության հանդեսի, երբ խուռներամ վարդերը գույնզգույն ծաղկաթերթեր են արձակում, շուշանն է շողում հովտում, հովհարվում հովից: Հեթանոսական սիրո աստվածուհի Աստղիկին նվիրված

տոնը դառնում է քրիստոնեական եկեղեցու ամենասիրված տոներից մեկը: Քրիստոսը Թաբոր լեռան վրա հայտնվում է արևի պես պայծառ դեմքով, ճերմակափայլ զգեստներով: Հանճարեղ բանաստեղծը, միաձուլելով հեթանոսականն ու քրիստոնեականը, ստեղծել է բնության այլաբանական հրաշալի երգ, որտեղ վառ պատկերները, ծաղիկների, արևի ու բույրերի ուրախությունը գարնան գույների ծաղկումն են ծածանում բառերի մեջ՝ ստեղծելով լուսավոր երաժշտության հրաշք մեղեդի: Սա բնության երգն է, կյանքի հաղթանակը, իսկ կրոնական իմաստն այն է, որ Քրիստոսը իր պայծառությունն ստանում է Հայր Աստծո լույսից և այն տարածում որպես ճշմարիտ հավատ: Հավատը շողշողուն պտուղ է, որի սնող տերևը Տիրոջ տավիղն է: Շարունակելով այլաբանությունը՝ բանաստեղծը հաստատում է, ու վարդ- Քրիստոսի լույսից ու ջերմությունից կյանք է առնում ողջ բնությունը: Իր այլաբանությամբ հանդերձ՝ այս և մյուս տաղերը բնության պաշտամունքի երգեր են, և անխտիր երգվել են եկեղեցական տոներին: Տաղերի մեղեդիները հորինել է Գրգոր Նարեկացին, ինքն էլ երգել է:

Գոհար վարդն վառ առեալ
ի վեհից վարսիցն արփենից.
Ի վեր ի վերայ վարսից
Ճաւալէր ծաղիկ ծովային:
Ի համատարած ծովէն
Պղպըջէր գոյնըն այն ծաղկին,
Երփին երփնունակ ծաղկին,
Շողշողէր պտուղն ի ճղին:
Քրքում վակասիր պտուղըն
Սնանէր խուռըն տերևով:

Նարեկացին վախճանվել է 1003-ին. նրա գերեզմանը գտնվել է Նարեկա Սուրբ Աստվածածին և Սուրբ Սանդուխտ եկեղեցիների հարևանությամբ՝ նրա հիշատակին կառուցված մատուռ- եկեղեցում: Հայոց եկեղեցին նրան դասել է սրբերի շարքը, իսկ 2015-ին Վատիկանը նրան դասեց տիեզերական սրբերի շարքը: 2021-ին Վատիկանի Ֆրանցիսկոս պապը փետրվարի 27-ը հռչակեց Նարեկացու հիշատակի ամենամյա տոն:

4. Առակը բանահյուսական ապաւ գրական հնագույն տեսակներից է՝ գեղարվեստական հորինվածքով և բարոյախրատական բովանդակությամբ: Առակի մեջ իրականությունը պատկերվում է այլաբանորեն՝ մարդկանց և անձնավորված կենդանիների, բույսերի, առարկաների միջոցով: Հնագույն առակագրության ամենախոշոր դեմքը հույն Եզոպոսն է (մ.թ.ա. VI դար): Առակներ են պատմվում Հին ու Նոր Կտակարաններում (Սողոմոնի առակները, Հիսուս Քրիստոսի առակները): Դեռևս V դարում հայ հեղինակները ծանոթ էին Եզոպոսի առակներին: Գրիգոր Մագիստրոսի պատվերով դպրոցներում սովորեցրել են առակներ գրել և մեկնաբանել: 12-րդ դարից սկսած՝ գրականության աշխարհականացման հետևանքով, առակի ժանրը մուտք է գործում գրականություն:

Հայ առակագրության խոշորագույն հեղինակներն են Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին:

Մխիթար Գոշը՝ նշանավոր գիտնականը, մանկավարժն ու օրենսդիրը, ծնվել է 12-դարի առաջին քառորդին Գանձակում: Կրթվել և վարդապետի աստիճանի է հասել իր ծննդավայրում, ապա, թաքցնելով վարդապետի իր կոչումը, մեկնում է Կիլիկիա և կատարելագործվում Սև լեռան նշանավոր ուսուցչապետերի մոտ: Կիլիկիայից վերադարձին լինում է Կարինում, ծանոթանում քրիստոնյա , ազգությամբ հայ Քուրդ իշխանի հետ, որը հետագայում օգնում է նրան հաստատվելու Կայանի Գետիկ վանքում: Երկրաշարժից խարխվում է Գետիկը և Քուրդ իշխանի քեռորդիներ Իշխան Իվանեն և զորավար Չաքարեն օգնում են նրան Տանձուտի ձորում կառուցել Նոր Գետիկ վանքը: Այս մասին Գանձակեցին գրում է. «...ավարտվեց Գետիկի հռչակավոր ու ծիծաղատեսք եկեղեցին, որ կառուցեց Մխիթար վարդապետը միաբանների հետ»: Եվ ինչպես Գոշն Էր (իր վարդապետ լինելը թաքցնելով) ուսանել Կիլիկիայում , այնպես էլ նրա մոտ ուսանելու էին գալիս շատերը՝ թաքցնելով իրենց վարդապետ լինելը:

Գոշը ժամանակի ամենաիմաստուն այրերից է, Չաքարե զորավարի խոստովանահայրը, եկեղեցական ժողովների մասնակիցը: Գոշն ապրել է մինչև խոր ծերություն, մահացել 1213-ին և թաղվել Նոր Գետիկ եկեղեցու բակում, որը նրա անունով կոչվել է Գոշավանք: Գոշ անունը Գանձակեցին մեկնաբանում է այսպես. «որովհետև շատ քիչ էին նրա մագերը» (Գոս-Գոշ): Կա նաև մի այլ ավանդություն , ըստ որի Մխիթար գոշով (ցորեն չափելու աման) ցորեն Էր բաժանում ժողովրդին՝ սովից փրկելու համար: Գոշը՝ «այն հռչակավորն ու գիտությամբ մեծիմաստը» (Գանձակեցի) թողել է հարուստ ժառանգություն:

Առակներ, «Թուղթ խրատականք», «Սոփերք հայկականք», «Շարք հայրապետացն Ալվանակից» և այլ շատ նշանավոր մեկնություններ ու պատմություններ: Սակայն նրա ստեղծագործության մեջ առանձնանում է «Դատաստանագիրք Հայոց » աշխարհիկ օրենսգիրքը: Այս գրքի ստեղծումը զուգահեռվում է Բյուզանդական օրենքների հայերեն թարգմանությանը, որ Կիլիկիայում Գրիգոր Տղա վեհափառի գլխավորությամբ իրականացնում է Ներսես Լամբրոնացին. «Դատաստանագրքի», ստեղծման մասին Գոշը խոսում է «Նախագրության» գլուխներում:

1184-ին Գոշը սկսում է շարադրել՝ առանց շտապելու, գիտակցելով, որ այն միշտ կարող է ավելի հարստանալ և կատարելագործվել:

Նա նշում է նաև իր գրքի ստեղծման ակունքները՝ Հին և Նոր Կտակարանները, սուրբ հայրերի կանոնները, հին ու նոր ժամանակների բոլոր սուրբ հիմնավորումները, դատավարության ժողովրդական ձևերը: «Նախագրության » մեջ նա խնդրում է , որ «եթե մեկը թերություն գտնի, աղաչում ենք , պակասը լրացնի, քանզի ամենայն գիրք ոչ թե մեկ ժամանակի մեջ է գրվում, այլ տարբեր ժամանակներից հավաքված պտուղներով»:

«Դատաստանագրքում» Գոշը խոսում է հոգու և մարմնի մասին. նա գտնում է, որ «ամենքի դատավորը ինքն՝ Աստված է»: Բայց «Հայրը ոչ մեկին չի դատում, այլ ամեն տեսակ դատաստաններ անելը տվել է Որդուն»:

«Դատաստանագիրքը» քաղաքացիական և եկեղեցական օրենքների ժողովածու է՝ «օրենսգիրք», որն իր ընդգրկումով ու մանրամասներով

ամենախոշորն ու արժեքավորն է հայ միջնադարում. Այն իրավականորեն կարգավորել է Հայաստանի ներքին կյանքը: Գոշի օրենսգրքի բարոյական հիմքը մարդասիրությունն է ու արդարությունը, նա ամեն կերպ մեղմում է նախասահմանված պատիժները, նշում է պատժի տարբերակներ, հաշվի առնում հանցանքի նրբությունները: «Դատաստանագրքի» օրենք և կանոն խմբավորված են երկու մասերի մեջ՝«Եկեղեցական կանոնք» և «Աշխարհական օրենք»:

«Դատաստանագիրքը» երկար ժամանակ տարածվել ու գործածվել է թե՛ Հայաստանում, թե՛ հայական գաղութներում: Սուդանի հայ համայնքը մինչ օրս օգտվում է այդ օրենսգրքից: Այն օգտագործել են նաև Վրաստանում, Լեհաստանում. Լեհերի միջոցով այն հիմք է դարձել ռուսական օրենսդրության համար:

Գոշը ձգտել է ժողովրդի մեջ արմատավորել իր իրավական ու բարոյական սկզբունքներն ու գաղափարները:

Գոշին մեծարել են «այր իմաստուն», «մեծ վարդապետ», «հռչակավորն և մեծիմաստն գիտությամբ» պատվանուններով:

«Մխիթարը՝ մի իմաստուն, հեզ մարդ և օրինագիտական ուսումով հռչակված» և «Մինչև այսօր էլ նրա գերեզմանը օգնում է այն հիվանդներին, որոնք հավատով ապավինում են նրա աղոթքներին»:

Կիրակոս Գանձակեցի

Գնահատման չափանիշներ 10-րդ դասարան

1 հարց- 1-ին՝ 1 միավոր, 2-րդ՝ 0,5 միավոր, 3-րդ՝ 2,5 միավոր, 4-րդ՝ 1 միավոր:

2 հարց- 1-ին՝ 0,5 միավոր, 2,3-րդ՝ 1-ական միավոր, 4-րդ՝ 2,5 միավոր:

3 հարց- 1, 2-րդ՝ 1-ական միավոր, 3-րդ՝ 3 միավոր:

4 հարց- 1-ին՝ 0,5 միավոր, 2-րդ՝ 1, 3-րդ՝ 2 միավոր, 4-րդ՝ 1,5 միավոր: